Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի
Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12/2022/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան 11/01/2022

1. **Գագիկ Գևորգյան** ՀՎՀՀ **78688521**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Սյունիք, Կապան, Շինարարների 14 39**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **BA3267229**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 16.10.2021թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել **15.000կգ** ընդհանուր քաշով, **ԱՏԳ ԱԱ 2516** ծածկագրին դասվող ապրանքներ՝ **320,000 ռուսական ռուբլի** (համարժեք 2,150.400 ՀՀ դրամ) ինվոյսային արժեքով, ինչը գերազանցել է ՀՀ կառավարության 2020թ.-ի փետրվարի 13-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները **(ԱՏԳ ԱԱ 2516) ծածկագրի համար՝ 1000կգ)**, ուստի Դուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման համար հիմք են հանդիսանում Օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձ Գագիկ Գևորգյանի կողմից իրականացված վերը նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ներմուծման ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է

համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը՝ **2,007,667 ՀՀ դրամ** [320,000/15000 x [15000 – 1000] x 6.72 /փոխարժեք/]

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներմուծման ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով՝ **401,533 ՀՀ դրամ** [2,007,667 x 20%]:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **8,351 ՀՀ դրամ** (11/01/2022թ. դրությամբ) [401,533 x 52օր x 0.04%]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը առ 11/01/2022թ. դրությամբ կազմում է՝ **409,884 ՀՀ դրամ** [401,533 + 8,351]:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 11/01/2022 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6. Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

7. Ընդամենը՝

8. Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի ավագ հարկային տեսուչ Լիլիթ Բաբայան